

*ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ԳԳՏ Արա Հովսեփյանի ուղերձը Շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողովին*

*Սեպտեմբերի 5, 2008*

*Հարգելի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ,*

*Հարգելի շահառուների խորհրդի անդամներ, հյուրեր,*

Այսօր Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան ՊՈԱԿ-ը և Շահառուների խորհուրդը հրավիրել են քաղաքացիական հասարակության ընդհանուր ժողով՝ քննարկելու և հաստատելու ՇԽ առաջիկա ընտրությունների կանոնակարգի նախագիծը և ձևավորելու ընտրական հանձնաժողովը:

ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի ներկա կազմի լիազորությունները կավարտվեն ս.թ. սեպտեմբերի 29-ին: Երկու տարի առաջ այդ օրը պաշտոնապես ուժի մեջ մտավ ՀՄՀ-Հայաստան ծրագրի միջկառավարական Համաձայնագիրը: Ըստ այդ Համաձայնագրի և ծրագրի Կառավարման պայմանագրի՝ յուրաքանչյուր տարի պետք է անցկացվի ՇԽ կազմի նոր ընտրություն: Այս տարի ընտրությունները կկայանան սեպտեմբերի 27-ին և դրանց արդյունքում կփոխարինվեն ՇԽ բոլոր 15 անդամները:

Շահառուների խորհուրդը իբրև մարմին ձևավորվել է 2006 թվականի մայիսի 6-ին, ապա երկրորդ տարվա կազմի ընտրությունները տեղի ունեցան 2007 թվականի սեպտեմբերի 29-ին փակ, գաղտնի քվեարկությամբ, որին մասնակցեց շուրջ 250 հետաքրքրված հասարակական կազմակերպություն: Խորհուրդն ունի 15 անդամ, ովքեր ներկայացնում են ծրագրի հիմնական շահառու խմբերը:

Բոլորին հայտնի է, որ ՀՄՀ-Հայաստան ծրագիրը հանրության կողմից առանձնակի հետաքրքրության և ուշադրության քիթախ է: Մի քանի պատճառներով, որոնցից թերևս կարելի է նշել հետևյալը.

ա/ այն եզակի դրամաշնորհային ծրագրերից է, որը կատարում է գործնական շոշափելի ներդրում երկրի տնտեսության մեջ, մասնավորապես ճանապարհային և ոռոգման ենթակառուցվածքների ոլորտում, ինչպես նաև խթանում տնտեսական զարգացումը, մասնավորապես գյուղատնտեսության մեջ:

բ/ լինելով տնտեսական ներդրումային ծրագիր, այն միևնույն ժամանակ ապահովում է իրական մասնակցային գործընթաց իր շահառու խմբերի և հանրության լայն խավերի համար: Ծրագրի շահառուների խորհուրդը հենց այն վառն օրինակն է թե ինչպես հասարակությունը կարող է իր մասնակցությունը - բառի լայն իմաստով – ունենալ այդ ծավալի և չափի ծրագրի մեջ:

ՇԽ-ն մի մարմին է, որի շնորհիվ քաղաքացիական հասարակությունը և համայնքների ներկայացուցիչները հնարավորություն ունեն մասնակցելու ծրագրին վերաբերող կարևոր հարցերի քննարկումներին՝ ներկայացնելով սեփական նկատառումներն ու առաջարկությունները: Լինելով խորհրդակցական մարմին՝ Շահառուների խորհուրդը 5 անդամների պատվիրակում է Կառավարման խորհուրդ՝ անմիջականորեն մասնակցելու ծրագրի կառավարման և որոշումների կայացման գործընթացին:

Համառոտ անդրադառնամ առ այսօր ՀՄՀ-Հայաստան ծրագրի գրանցած արդյունքներին:

1. մենք արդեն իսկ ունենք առաջին ավարտված շինարարական նախագիծը՝ չորս համայնքներում (Արևշատ, Աբովյան, Լանջազատ և Գրիբոյեդով) ավարտված է ոռոգման երրորդ կարգի ջրանցքների շինարարությունը,
2. ավատրին է մոտենում ոռոգման ծրագրի նախագծային աշխատանքները,
3. շուրջ երկու ամսից կավարտենք ևս մեկ շինարարական նախագիծ՝ Արմավի-Իսահակյան-Գյումրի ավտոճանապարհի 24.5 կիլոմետրանոց հատվածի վերականգնումը,
4. սկսվել են ճանապարհաշինության առաջին մեծ փաթեթի շինարարական աշխատանքները: Փաթեթի ընդհանուր ծավալն է 272 կիլոմետր և այն բաղկացած է 6 լոտից,
5. ջրից դեպի շուկա ծրագրով ներտնտեսային ջրի կառավարում և անցում դեպի բարձրարժեք գյուղատնտեսություն թեմաներով ունենք վերապատրաստված 18.139 ֆերմեր Հայաստանի բոլոր 10 մարզերում, հիմնվել է 52 ցուցադրական տնտեսություն, իսկ մայիսից մեկնարկված վարկային բաղադրիչի շրջանակներում արդեն իսկ հատկացվել է շուրջ 1 միլիոն ԱՄՆ դոլարի վարկ և կա 70 վարկառու:

ՀՄՀ-Հայաստան ծրագրի առջև այսօր կան նաև որոշակի խնդիրներ. դոլարի արժեզրկումը և շինարարական նյութերի գնաճը մեզ ստիպում են վերակայել ծրագրի որոշ բաղադրիչներ և կրճատել դրանց ծավալները: Սակայն Հայաստանի կառավարությունը բազմիցս նշել է, որ հանդիսանալով պետական ծրագիր, ՀՄՀ-Հայաստանով նախատեսված աշխատանքները առաջնահերթություն են կառավարության համար և որ դրանց իրականացման համար իրենք պատրաստ են միջոցներ հատկացնել: Առաջին օժանդակությունը Հայաստանի կառավարության կողմից արդեն իսկ արված է. այս տարվա պետական բյուջեից ճանապարհաշինության ենթածրագրի առաջին փաթեթի շինարարական աշխատանքների իրականացման համար հատկացվել է 16,8 մլն ԱՄՆ դոլար գումար, ինչը կբավարարի մինչև այս տարվա դեկտեմբերի վերջ, իսկ ընթացքում կշարունակեն աշխատանքը Կորպորացիայի հետ անհրաժեշտ մյուս գումարները բաց թողնելու նպատակով:

Ես ուզում եմ այսօր ՀՄՀ-Հայաստան ծրագրի անունից խորին երախտագիտություն հայտնել Շահառունների խորհրդի ներկա կազմին, որի անդամների մեծ մասի հետ աշխատել ենք արդեն շուրջ երկու տարի, կատարած աշխատանքի համար, և որոնց նվաճումները և քաղված դասերը անչափ կարևոր կլինեն ապագա ընտրվելիք Խորհրդի համար: Նշել, որ այս ժողովին ներկայացված Ընտրությունների կանոնակարգի նախագիծը նույնպես մշակվել է ՇԽ անդամներից կազմված աշխատանքային խմբի կողմից և այսօր ներկայացված է ձեր դատին:

Այժմ նպատակ չունենալով էլ ավելի երկարաձգելու այսօրվա հավաքի գործնական մասի սկիզբը, առաջարկում եմ անցնել օրակարգին և սկսել ժողովի նախագահողի ընտրությունից: Այնուհետև նախագահողը կշարունակի վարել ժողովը ըստ օրակարգի: